ՀԵՂԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա
Երաժշտագիտության բաժնի բակալավրական III կուրսի ուսանողուհի
E-mail: hexine_sargsyan@mail.ru

Ղեկավար՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ն. Ռ. Աթանասյան

ՔԱՆՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑ. ԽԱՉԱՏՈՒՐ

Հայաստանում քանոնի կատարողական դպրոցը հարուստ է անուններով, որոնք ձևավորել, ինչպես նաև հարստացրել են նվագարանի համար գրված ստեղծագործությունների հարուստ երկացանկը:

Ներկա հոդվածում փորձել ենք անդրադարձ կատարել նվագարանի հայ կատարողական դպրոցի ստեղծման և զարգացման խնդիրներին:

Հայկական ժողովրդական գործիքների ծագման մասին տեղեկություններ են հանդիպում դեռևս վաղ միջնադարի պատմիչների աշխատություններից, որոնցում հիշատակվում են քնարը, ջնարը, վինը, բամբիռը, փանդիռը, սրինգը, տավիղը, ծնծղան, թմբուկը: Այս մասին են նշում Ն. Կ. Թահմիզյանը «Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ.» (1. էջ18), ինչպես նաև Ք. Քուշնարյանը, Մ. Մուրադյանը, Գ. Գյոդակյանն «Ակնարկ հայ երաժշտության պատմության» (2. էջ 35), Մ. Հարությունյանը, Ա. Բարսամյանը «Հայ երաժշտության պատմություն» (3. էջ 19) աշխատություններում: Զարգացած միջնադարում, ինչպես նշում է Ն. Թահմիզյանը, «Երաժշտական նոր անուններ են թվարկում թե՛ Երզնկացին (որ դրանք բաժանում է լարայինների և փողայինների), թե՛ Ղրիմեցին, (որ հիշատակում է «սանդիր», «ղանոն» և «արղանոն» բազմալար գործիքները) և թե՛ Սյունեցին...» (1. էջ 36):

Առաջին անգամ «քանոն» անունը հիշատակվում է միջնադարյան ձեռագիր աշխատություններում, այդ մասին տեղեկություն ենք ստանում վերոնշյալ «Ակնարկ հայ երաժշտության պատմության» գրքից (2. էջ 58): Այն տարածվել է Իրանի, Հայաստանի, Ասորիքի և Միջին Արևելքի տարբեր ժողովուրդների մշակույթներում՝ անցնելով զարգացման և կատարելագործման տարբեր ուղիներ:


Խաչատուր Ավետիսյան

XX դարասկզբին հայ ժողովրդական երաժշտական միջավայրում քանոնը հիմնականում նվագում էին տղամարդ կատարողները: Մեզ են հասել այդ ժամանակաշրջանում հայտնի քանոնահարների անուններ՝ Զավեն Տերմենջյան, Նշան Հոպյան, Գարեգին Խանիկյան, Արշավիր Ֆերջուլյան, Գուսան Շահեն, Խաչատուր Ավետիսյան, ում ստեղծագործական և կատարողական եռանդուն գործունեության շնորհիվ քանոնի կատարողական արվեստը հասնում է նոր բարձունքների:*

Հայ աշուղական դպրոցի հայտնի ներկայացուցիչներից Գուսան Շահենի շնորհիվ քանոնը ներգրավվեց հայ ազգային նվագարաններից կազմված անսամբլներում իբրև խմբի գործիք: Եվ միայն 1940-ական թվականներին այն սկսեց կիրառվել, որպես մենակատար գործիք՝ շնորհիվ Խաչատուր Ավետիսյանի:

Հայաստանում քանոնի մասնագիտական դպրոցի լավագույն ներկայացուցիչներն իրենց կատարողական գործունեությանը զուգընթաց մշտապես աշխատանք են տարել գործիքի տեխնիկական և ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնման և, որ ամենակարևորն է, գործիքի համար գրականություն ստեղծելու ուղղությամբ: Հենց այդ բարդ աշխատանքն է ստանձնում քանոնի ազգային կատարողական դպրոցի հիմնադիր Խաչատուր Ավետիսյանը:

---

* Տվյալ դեպքում Գուսան Շահենը աշուղի ամբողջական

* Զեկուցումն ընթերցվել է ԵՊԿ-100-ամյակին նվիրված ԵՊԿ ՈՒԳՍՄ գիտաժողովի շրջանակներում:
Երաշխավորվել է հրատարակության ԵՊԿ խմբագրական խորհրդի առաջարկով:

Նվիրվում է ԵՊԿ հիմնադրման 100-ամյա հոբելյանին

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ժողովրդական արտիստ, մեծանուն կոմպոզիտոր Խաչատուր Ավետիսյանը ծնվել է 1926 թվականի ապրիլի 18-ին Լենինականում: Նա մեծացել է այնպիսի միջավայրում, որտեղ հնչել և գնահատվել է ազգային երաժշտությունը: Ժողովրդական երգերը մոր՝ Սաթենիկի կատարմամբ, գրավեցին երեխայի սիրտը: Ներշնչված լինելով երգ-երաժշտությամբ՝ պատանին սովորում է նվագել թառ, քանանչա, մանդոլին, ջութակ և դաշնամուր: Ապագա երաժիշտն արդեն դպրոցական տարիքում ղեկավարում էր պիոներների պալատի ժողովրդական գործիքների խմբակը, այնուհետև ֆիլհարմոնիայի ժողովրդական գործիքների նվագախումբը:

Ինչպես նշում է Թ. Մ. Արազյանն իր «Խաչատուր Ավետիսյան» մենագրության մեջ. «Մի անգամ ֆիլհարմոնիայի դիրեկտորի աշխատասենյակում երաժշտական նոր գործիք տեսավ՝ քանոն: Առաջին իսկ հնչյուններից այդ ինքնատիպ գործիքն ամբողջովին հափշտակեց երիտասարդ երաժշտին» (4. էջ 6.): Պատանու սրտում ծագած կայծն ապագա կոմպոզիտորին ոգեշնչում է ստեղծելու պարերգ, սոնատ, կոնցերտ ու երգ:

23-ամյա երաժիշտը երաժշտական կրթություն ստանալու նպատակով տեղափոխվում է Երևան: Իրականանում է կոմպոզիտորի նվիրական երազանքը: Էրզրումցու և լենինականցու հաստատակամության, համառ աշխատանքի ու ջանքերի շնորհիվ կերտվում ու հարթվում է երիտասարդի ստեղծագործական ուղին:

Կոմպոզիտորներ Գրիգոր Եղիազարյանի՝ Ռոմանոս Մելիքյանի ուսումնարանում, ապա կոնսերվատորիայում Էդվարդ Միրզոյանի ստեղծագործական դասարանում նա ձեռք է բերում կոմպոզիտորական արվեստի հմտությունները: Այս տարիներին է ձևավորվում նաև Խաչատուր Ավետիսյան-մանկավարժը:

Խ. Ավետիսյանի ջանքերի շնորհիվ 1950 թ. Ռոմանոս Մելիքյանի անվ. երաժշտական ուսումնարանում հիմնվում է քանոնի դասարանը, և նա դառնում է այդ դասարանի մանկավարժն ու ժողովրդական գործիքների բաժնի ղեկավարը: Կարճ ժամանակահատվածում միջնակարգ ուսումնական հաստատության քանոնի բաժինը դարձավ երիտասարդ քանոնահարների դարբնոց:

Խ. Ավետիսյանը, կատարողական գործունեությունից բացի, հանդես էր գալիս նաև որպես կոմպոզիտոր: Մասնավորապես քանոնի համար երաժշտական ուսումնարանում գրված գործերից կարելի է հիշատակել «Օրորոցային», «Գետափին» երգերը, որոնք 1951 թ. հունվարին առաջին անգամ հնչելով ուսումնարանի սաների ավանդական համերգում, անմիջապես մեծ տարածում ունեցան: Համերգին հնչեց նաև Է. Գրիգի «Պեր Գյունտ» սյուիտից «Անիտրայի պար»-ի մշակումը, որը Խ. Ավետիսյանի կողմից կատարած առաջին փոխադրումն էր քանոնի համար:

Որպես ավարտական աշխատանք Խ. Ավետիսյանը ներկայացրեց երեք մասից բաղկացած լարային Կվարտետը, ինչպես նաև մեկմասանի Կոնցերտը քանոնի և ժողովրդական գործիքների նվագախմբի համար: Սա առաջին խոշոր կտավի ստեղծագործությունն է՝ գրված ժողովրդական երաժշտական գործիքի համար:

Դասավանդման առաջին տարիներին կարիք կար ստեղծելու ծրագիր և ուսումնական նյութ քանոնի դասավանդման համար: Նա ինքն էր կազմում և հորինում հատուկ վարժություններ ու էտյուդներ, նաև ձեռնամուխ եղավ կատարել զանազան փոխադրումներ արևմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններից: Նույն այդ ժամանակաշրջանում նա գրել է փոքրիկ պիեսներ՝ ստորաբաժանելով դրանք ըստ բարդության աստիճանի:

Այսպիսով, ուսումնարանում Խ. Ավետիսյանը հաջողությամբ համատեղում էր ստեղծագործական, մանկավարժական աշխատանքը և համերգային գործունեությունը: Ավետիսյանի կարևոր ներդրումներից է նաև քանոնի համար ստեղծած նվագացանկը: 1968 թ. «Հայաստան» հրատարակչության կողմից լույս ընծայվեց Խ. Ավետիսյանի «Ձեռնարկ քանոնի համար» երկհատորյակի առաջին մասը: Նշենք, որ մինչ այդ գոյություն չի ունեցել հատուկ գրականություն՝ հրատարակված քանոնի համար:

Ստեղծագործական կյանքի ամբողջ ընթացքում Ավետիսյանը մեծ հարգանք ու ճանաչում է վայելել՝ ժողովրդական երգն ու հայկական քանոնը հնչեցնելով աշխարհի տարբեր երկրներում: Եթե մինչ այդ քանոնը հայտնի էր Արևելյան երկրներում, ապա շնորհիվ Խ. Ավետիսյանի, միջազգային փառատոներում և բեմերում առաջին անգամ ներկայանում է քանոնը, որպես հայկական ազգային երաժշտական գործիք: Նա հնչեցնում է ժողովրդական գործիքի համար գրված կոմպոզիտորական ստեղծագործություններն աշխարհի տարբեր բեմերում՝ Բեռլինում, Մոսկվայում, Սոֆիայում և այլուր:

1974-1978 թթ. Խ. Ավետիսյանը եղել է Թաթուլ Ալթունյանի անվ. երգի-պարի պետական անսամբլի գեղարվեստական ղեկավարը: Հատկանշական են անսամբլի հետ աշխատելու տարիները, քանի որ այս ժամանակահատվածում են գրվել իր և մյուս հայ կոմպոզիտորների հեղինակային ստեղծագործությունները հատուկ երգի-պարի անսամբլի համար, որոնք հնչում էին աշխարհի տարբեր բեմահարթակներում և արժանանում պատվավոր մրցանակների:

Խ. Ավետիսյանի ստեղծագործական ժառանգությանն են պատկանում երկու կոնցերտները քանոնի և ժողովրդական գործիքների նվագախմբի համար, մենանվագ քանոնի համար պիեսները, որոնցից հայտնի են «Կախարդված ծաղիկներ»-ը, «Անընդհատ շարժում»-ը, «Հուշեր»-ը, ստեղծագործություններ ժողովլրդական գործիքների և պարի պետական անսամբլի համար, ինչպես նաև բազմաթիվ երգեր՝ գրված ձայնի և դաշնամուրի համար, այդ թվում «Մախմուր աղջիկ», «Իրիկնային», «Իմ անուշ տավիր» և այլն: Խ. Ավետիսյանը կատարել է նաև այլ կոմպոզիտորների ստեղծագործությունների փոխադրումներ քանոնի համար, գրել է երաժշտություն կինոնկարների համար:

Իր բեղուն համերգային և ստեղծագործական գործունեության շնորհիվ Խ. Ավետիսյանն արժանացել է բարձր պարգևների և գնահատականների, ոսկե և արծաթե մեդալների, ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհի տարբեր քաղաքներում, այդ թվում՝ Մոսկվայում, Բեռլինում, Փարիզում:

Նվիրվում է ԵՊԿ հիմնադրման 100-ամյա հոբելյանին

1978 թ. իրականացավ նրա վաղեմի երազանքը. տարիների սպասումից հետո, Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում բացվեց ժողովրդական նվագարանների և երգեցողության ամբիոնը, որի հիմնադիրն եղավ Խաչատուր Ավետիսյանը և որը նա ղեկավարեց մինչև կյանքի վերջը: Անուրանալի է այս ամբիոնի դերն ազգային կատարողական արվեստի կայացման և զարգացման գործում: Իր գոյության ավելի քան չորս տասնամյակի ընթացքում այն տվել է այս բնագավառի բազմաթիվ փայլուն կատարողներ և մանկավարժներ: Այսօր Ավետիսյանի ուսանողները, շարունակելով նրա թողած երաժշտական ժառանգությունը և դասավանդման ավանդույթները, նպաստում են ազգային երաժշտական արվեստի ավանդույթների պահպանման և զարգացման շնորհակալ գործին:

Խաչատուր Ավետիսյանը Հայաստանի ինքնատիպ երաժիշտներից մեկն է: Արվեստագետի խառնվածքին, նրբանկատ էությանը համադրվող ստեղծագործական գործունեությունը հիրավի նպատակաուղղված է եղել մայր հայրենիքին ու իր ժողովրդին ծառայելուն: Իր մարդկային նկարագրով և ստեղծագործողի ամբողջ էությամբ ինքն իրեն դրսևորեց որպես խորապես ազգանվեր երախտավոր, որն իր արվեստով բացահայտում ու երևան էր բերում իր ժողովրդի հոգևոր անսպառ հարստության ավետիսյանական գունեղությունը, ուժն ու գեղեցկությունը:

2021 թվականին լրացավ մեծանուն կոմպոզիտորի 95-ամյակը, որի առիթով Գյումրիում և Երևանում անցկացվեց հոբելյանական համերգների շարք: Դա իր սաների, իր գործը շարունակողների երախտիքի տուրքն էր իրենց ուսուցչի լուսավոր անհատականությանն ու իր արժեքավոր ստեղծագործական ժառանգությանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. *Թահմիզյան Ն. Կ.,* Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V - XV դդ., Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986 թ.: *Tahmizyan N. K.,* Grigor Narekatzin ev hay yerazhshtuthun' V - XV dd., Yer., HSSH GA hrat., 1986 th.
2. *Քուշնարյան Օ. Ս., Մուրադյան Մ., Գյոդակյան Գ. Ծ., Ակնարկ հայ երաժշտության պատմության, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1963 թ.:* Qushnaryan Q. S., *Muradyan M. H., Gyodakyan G. Sh.,* Aknark hay yerazhshtuthyan patmuthyan, Yer., HSSH GA hrat., 1963 th.
3. *Հարությունյան Մ. Գ., Բարսամյան Ա. Ա.,* Հայ երաժշտությունն պատմություն, Եր., 1996 թ.: *Haruthyunyan M. G., Barsamyan A. A.,* Hay yerazhshtuthyan patmuthyun, Yer., 1996 th.
4. *Արազյան Թ. Մ.,* Խաչատուր Ավետիսյան, Եր., Հայաստան, 1973 թ.: *Arazyan Th. M.,* Khachatur Avetisyan, Yer., Hayastan, 1996 th.

Բանալի-բառեր. *Խաչատուր Ավետիսյան, քանոն, Երևանի պետական կոնսերվատորիա, ժողովրդական նվագարան, կոմպոզիտոր, առաջին ստեղծագործությունները քանոնի համար, արևելյան մշակույթ, կատարողական արվեստ:*

Ключевые слова: *Хачатур Аветисян, канон, Ереванская государственная консерватория, народный инструмент, композитор, первые произведения для канона, восточная культура, исполнительское искусство.*

Keywords: *Khachatur Avetisyan, Qanun Yerevan State Conservatory, Traditional Music Instrument, Composer, First Forks for Qanun, Eastern Culture, Performing Arts.*

Резюме

Музыковед, студентка 3-го курса бакалавриата ЕГК им. Комитаса *Егине Саргсян. - "Армянская школа канона: Хачатур Аветисян".*

В статье автор обращается к истории национального инструмента "канон" от истоков его формирования до современной исполнительской школы игры на каноне в лице Хачатура Аветисяна. Представлен жизненный и творческий путь Аветисяна как композитора, исполнителя, педагога. В 1978 году в ЕГК Хачатуром Аветисяном была основана кафедра народных инструментов и армянского пения, которой он руководил до конца жизни. В 2021 году в Гюмри и Ереване прошли юбилейные мероприятия, посвященные 95-летию со дня рождения Х.Аветисяна.

Summary

Musicologist, third year bachelor student at YSC *Heghine Sargsyan. - "Armenian Qanun School. Khachatur Avetisyan".*

The article discusses the history of qanun, a traditional musical instrument, from its emergence until the establishing of the contemporary school of qanun playing, founded by Khachatur Avetisyan. The author introduces Avetisian's life and work as an artist and teacher. In 1978, he founded the Department of Armenian Instruments and Singing at the YSC, which he directed for the end of his life. In 2021, Khachatur Avetisyan's 95th birthday celebrations were held in Gyumri and Yerevan.